ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

«21»«նոյեմբերի»2017Թ ԼՄԱՀ № 0213

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Արևաշող համայնք,
հասցե Լոռու մարզ
գ. Արևաշող, 1 Փ. 105
Հեռախոս (0255) 2-21-76,
էլ. փոստ arevashogh.lori@mta.gov.am

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

ՀԱՐԳԵԼԻ ՊԱՐՈՆ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Ղեկավարվելով Տեղական Ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 33 – րդ հոդված 4 – րդ կետի 9) ենթակետով կից Ձեզ եմ ներկայացնում Լոռու մարզի Արևաշող համայնքի ղեկավարի թիվ 20 որոշումը:

Առդիր՝ __2__ թերթ:

ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Պ. ՊԱՊԻԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

«20»«Նոյեմբերի»2017թ № 020

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԽԱՆՈՒՄ ԱՇՈՏԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ԱՆՈՒՆԻՑ ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ ՍՊԱՐՏԱԿ ՀԱՅԿԱԶԻ ՂՈՒԲԱԹՅԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2017 Նոյեմբերի 6 – ին ՀՀ Լոռու մարզի Արևաշող համայնքի բնակիչ՝ Խանում Աշոտի Բաղդասարյանը իր կողմից լիազորված անձ Սպարտակ Հայկազի Ղուբաթյանի միջոցով վարչական բողոք է ներկայացրել, որով Արևաշող համայնքի ղեկավարին խնդրել է

1. Ոչ իրավաչափ ճանաչել Արևաշող համայնքի ղեկավարի այն գործողությունները և (կամ) անգործությունը, որի արդյունքում Խանում Աշոտի Բաղդասարյանի ընտանիքը դուրս է մնացել Արևաշող համայնքի աղետի գոտու վերականգման պետական ծրագրի շրջանակներում կազմված հերթացուցակից առանց վարչարարության իրականացման և վարչական ակտ կայացնելու:
2. Ընդունել բարենպաստ վարչական ակտ Խանում Աշոտի Բաղդասարյանի ընտանիքին Արևաշող համայնքի 15.12.2008թ – ի աղետի գոտու վերականգնման պետական ծրագրի շրջանակներում բնակարան ստանալու իրավունք ունեցող անձանց հերթացուցակում ընդգրկելու մասին:
3. Հարգելի ճանաչել իր գործը վարչական կարգով բողոքարկման ժամկետը բաց թողնելը և վարչական բողոքը քննության առնել օրենքով սահմանված կարգով:

Ուսումնասիրելով վարչական բողոքը և վարչական վարույթում առկա փաստաթղթերը՝ գտնում եմ որ, վարչական բողոքը ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

Գտնում եմ, որ ՀՀ «Վարչարարության հիմունքներ և վարչական վարույթի մասին» օրենքի 20 – րդ հոդվածի 2 – րդ, 3 – րդ, 4 – րդ կետերի

2. Վարչական վարույթը հարուցվում է անձի (անձանց) դիմումի կամ վարչական մարմնի նախաձեռնության հիման վրա (հարուցման փուլ):
3. Դիմումին կամ վարչական մարմնի նախաձեռնությանը համապատասխան իրականացվում են վարչական գործի քննարկման հետ կապված՝ սույն օրենքով նախատեսված գործառույթները (ընթացիկ փուլ):
4. Վարչական վարույթը եզրափակվում է վարչական ակտի ընդունմամբ (եզրափակիչ փուլ):

Բողոք բերողի այն պնդումը, թե համայնքի ղեկավարի գործողությունները կամ անգործությունը, որի արդյունքում առանց վարչարարության իրականացման և վարչական ակտ կայացնելու Խանում Աշոտի Բաղդասարյանի ընտանիքը դուրս է մնացել Արևաշող համայնքի աղետի գոտու վերականգման պետական ծրագրի շրջանակներում կազմված հերթացուցակից անհիմն է, քանի, որ 1988թ – ի դեկտեմբերի 7 – ի երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած և պետական աջակցության ծրագրով բնակարաններով բարելավման իրավունք ունեցող Լոռու մարզի Արևաշող համայնքի բնակիչների հերթացուցակը (այսուհետ հերթացուցակ) կազմվել է, համաձայն ՀՀ Կառավարության 2008թ – ի նոյեմբերի 13 – ի թիվ 1337 – Ն որոշմամբ հաստատված կարգի՝ մասնավորապես 5 կետի

5. Բնակարանային պայմանների բարելավման համար հաշվառվելու նպատակով քաղաքացիները դիմումները ներկայացնում են ըստ բնակության վայրի՝ համայնքի ղեկավարին: Դիմումում նշվում են ընտանիքի անդամների, այդ թվում՝ ժամանակավոր բացակայողների թիվը, ժամանակավոր բնակության վայրը:

6. Դիմումին կից ներկայացվում են՝

1) ընտանիքի անդամների անձնագրերի (անչափահաս անդամների՝ ծննդյան վկայականների) պատճենները.

2) ամուսնության (ամուսնալուծության դեպքում՝ ամուսնալուծության) վկայականների պատճենները.

3) 1988 թվականի դեկտեմբերի 7-ի դրությամբ ընտանիքի կազմի, ինչպես նաև տուն ունենալու մասին քաղվածք՝ համապատասխան բնակավայրի տնտեսությունների հաշվառման գրքից, դրա բացակայության դեպքում՝ արխիվային տեղեկանք և (կամ) այլ փաստաթղթեր, որոնցով հիմնավորվում է երկրաշարժի պահին տուն ունենալու փաստը:

Արևաշող համայնքի բնակիչների դիմումների հիման վրա կազմվել է հերթացուցակը և հաստատվել է համայնքի ղեկավարի կողմից համաձայն ՀՀ Կառավարության 2008թ – ի նոյեմբերի 13 –ի թիվ 1337-Ն որոշմամբ սահմանված կարգի 22 – րդ կետի

22.Բնակարանային պայմանների բարելավման իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակները ենթակա են հաստատման համայնքի ղեկավարի կողմից՝ մինչև 2008 թվականի դեկտեմբերի 15-ը:

Բնակարանային պայմանների բարելավման համար հաշվառվելու նպատակով Խանում Աշոտի Բաղդասարյանը մինչև 2008թ – ի դեկտեմբերի 15 –ը ընկած ժամանակահատվածում Արևաշողի համայնքապետարան գրավոր չի դիմել և դիմումին կից սահմանված փաստաթղթեր չի ներկայացրել այդ, իսկ պատճառով վարչական վարույթ չի հարուցվել, նրա համար հաշվառման գործ չի կազմվել:

2009թ – ի Հուլիսի 23 – ին ՀՀ Կառավարության թիվ 845 – Ն որոշման համաձայն փոփոխություններ են կատարվել թիվ 1337 – Ն որոշմամբ հաստատված կարգում: Փոփոխություններ են եղել նաև 22 – րդ կետում և ներկայումս հիշյալ 22 – րդ կետի համաձայն Արևաշող համայնքի ղեկավարը լիազորություն չունի սահմանված ժամկետում դիմում չներկայացրած անձանց ընդգրկելու հերթացուցակում:

22. Բնակարանային պայմանների բարելավման իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակները ենթակա են հաստատման համայնքի ղեկավարի կողմից՝ մինչև 2008 թվականի դեկտեմբերի 15-ը: 2008 թվականի դեկտեմբերի 15-ից հետո դիմումներ չեն ընդունվում, և այդ ժամկետում բնակարանային պայմանների բարելավման համար հաշվառվելու նպատակով՝ սահմանված կարգով դիմում չներկայացրած անձանց նկատմամբ աղետի գոտու գյուղական բնակավայրերում բնակելի տների հատկացման մասով պետական աջակցության ցուցաբերման պարտավորությունների կատարումը համարվում է դադարեցված:

(22-րդ կետը լրաց. 23.07.09 N 845-Ն)

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքներ և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 76 – րդ հոդվածի 1 – ին կետի բ) կետով, 3 – րդ կետի բ) ենթակետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Բողոք բերողի վստահորդ Խանում Աշոտի Բաղդասարյանի՝
   1) Արևաշող համայնքի ղեկավարի այն գործողությունները և (կամ) անգործությունը, որի արդյունքում առանց վարչարարության իրականացման և վարչական ակտ կայացնելու Խանում Աշոտի Բաղդասարյանի ընտանիքը դուրս է մնացել Արևաշող համայնքի աղետի գոտու վերականգման պետական ծրագրի շրջանակներում կազմված հերթացուցակից ոչ իրավաչափ ճանաչելու,
   2) Բարենպաստ վարչական ակտ ընդունելու և իր ընտանիքին Արևաշող համայնքի 15.12.2008թ – ի աղետի գոտու վերականգնման պետական ծրագրի շրջանակներում բնակարան ստանալու իրավունք ունեցող անձանց հերթացուցակում ընդգրկելու վերաբերյալ վարչական բողոքը մերժել ամբողջությամբ:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում այն ստանալու պահից և կարող է բողոքարկվել վարչական կարգով որոշումն ուժի մեջ մտնելու պահից վեցամսյա ժամկետում կամ դատական կարգով որոշումն ուժի մեջ մտելու պահից երկամսյա ժամկետում:

ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Պ. ՊԱՊԻԿՅԱՆ